


Հաստատում եմ

Հայաստանի Շախմատի Ֆեդերացիայի
Փոխնախագահ  Ս.Լ.Լյուտյան
20 հունիսի 2019թ.

Համահայկական 7-րդ խաղերի շախմատի մրցաշարի կանոնակարգ

Մրցաշարի կազմակերպիչները - Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե, Հայաստանի Շախմատի Ֆեդերացիա

Մրցաշարի անցկացման վայրը - Մրցաշարի առաջին մասը անց է կացվում քաղաք Ստեփանակերտում, իսկ երկրորդ մասը՝ քաղաք Երևանում, Տ.Պետրոսյանի անվան շախմատի տանը: Հասցե՝ ք.Երևան, Խանջյան 50

Մրցաշարի անցկացման ժամկետները - 2019թ. օգոստոսի 6-11

Մրցաշարի անցկացման ձևաչափը - Մրցաշարն անց է կացվում կանանց և տղամարդկանց 2 առանձին խմբերով, շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով:

Մրցաշարի անցկացման ժամկարգը - Մեկ պարտիայի համար յուրաքանչյուր մասնակցին տրվում է 60րոպե 30 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

Մրցաշարի մասնակիցները - Տղամարդկանց մրցաշարին մասնակցելու իրավունք ունեն 2019թ. հուլիսի 1-ի դրությամբ ՖԻԴԵ-ի վարկանիշային ցուցակում մինչև 2301 գործակից ունեցող շախմատիստները: Կանանց մրցաշարին մասնակցելու իրավունք ունեն 2019թ. հուլիսի 1-ի դրությամբ ՖԻԴԵ-ի վարկանիշային ցուցակում մինչև 2101 գործակից ունեցող շախմատիստուհիները:

Մրցաշարերի (և՛ կանանց, և՛ տղամարդկանց) մասնակիցների սահմանափակումն ըստ քաղաքների.

Երևան - 5, Գյումրի, Վանաձոր - 3, Արովյան, Հրազդան, Ստեփանակերտ - 2, Հայաստանի Հանրապետության մնացած բոլոր քաղաքներից, ինչպես նաև 8000-ից ավելի բնակչություն ունեցող գյուղական բնակավայրերից՝ մեկական մասնակից: Արտերկրի շախմատիստների մասնակցության համար միակ սահմանափակումը գործակցային շեմն է:

